**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Նոյեմբերի ----------------2025թ. N ՄՊ/ 967 - Ա

ք. Արմավիր

## «ՖԵՐԻԿԻ ՌԶԱԼԻԵ ՌԱՇԻԴԻ ՕԶՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՖԱՐՖԱՐՅԱՆԻՆ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով Տալլինի համալսարանի ռեկտորի 2025 թվականի հոկտեմբերի 9-ի հրավերը և «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Ֆարֆարյանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ‹‹Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն›› հիմնադրամի, Հայաստանում Էստոնիայի միջազգային համագործակցության կենտրոնի (ESTDEV), ինչպես նաև Էստոնիայի կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի հետ համատեղ իրականացվող ‹‹Ապագայի առաջնորդ›› ուսումնական ծրագրին մասնակցելու նպատակով.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Ֆարֆարյանին, վարձատրության պահպանմամբ, 2025 թվականի նոյեմբերի 16-ից 21-ը ներառյալ գործուղել Էստոնիայի Հանրապետություն:
2. Նարինե Ֆարֆարյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Գայանե Մելքոնյանին:
3. 2025 թվականի նոյեմբերի 16-ից 21-ը ներառյալ «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Գայանե Մելքոնյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարինե Ֆարֆարյանի՝ Էստոնիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:
5. Նարինե Ֆարֆարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 24-ից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

Восстановимая подпись

X

Արամ Գրիգորյան

Подписано: GRIGORYAN ARAM 2509720082

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**